ԵՐԲ ԲԻԶՆԵՍԻ «ՀԱՄՆ ՈՒ ՀՈՏԸ» ԲԱՎԱՐԱՐ ՉԷ

Սխալ կառավարում և փակվող բիզնեսներ



Kingdom of the Netherlands

Մի նոր վառարան, փաթեթավորման արկղեր ու ցանկություն. բիզնեսը մեկնարկեց: Առաջին քայլը բիզնեսի անունն ընտրելն էր՝ «Փախլավա սիրում ես» (փախլավա սիրում ես): Այդպես հիմնվեց ընտանեկան բիզնեսը: Հիմնականում թխում էին փախլավա, բացի դրանից՝ նաև սիգարետներ, բլինչիկի լիստեր և գաթաներ:

«Բռնի տեղահանումից հետո շատ մտածեցինք, թե ինչ կարող ենք անել, որ ունենանք լրացուցիչ եկամուտ: Մայրս աշխատանք չուներ, իսկ նա հրաշալի թխվածքաբլիթներ էր պատրաստում: Առանց որևէ տեղ սովորելու՝ մենք կարող էինք պատրաստել և վաճառել նրա պատրաստածները»:

Անի Աբաղյան

«Փախլավա սիրի՞ս ըս»-ի համահիմնադիր

«Մի անգամ պատվերներ ուղարկեցինք Ռուսաստան: Այդ մարդիկ 90-ականներին էին Արցախից դուրս եկել: Նրանք զանգեցին մեզ, շնորհակալություն հայտնեցին, ասացին, որ շատ հուզվել են և մեր շնորհիվ մի պահ վերադարձել են Արցախ: Մեր այդ մտահղացումը հաճախորդները գնահատեցին ու հավանեցին»:

Անին տարբեր վարպետության դասերի է մասնակցել՝ կապերը գումարի աղբյուր դարձնելու, բիզնեսը ներկայացնելու, SMM անելու և բիզնեսի աճի համար ժամանակ տրամադրելու վերաբերյալ:

Բայց ասում է, որ այդ դասերը բավարար չեն ցանկալի արդյունքի հասնելու համար:

Հայաստանում բիզնեսների փակման պատճառներից մեկը բիզնեսի կառավարման հմտությունների պակասն է: Սա համատարած խնդիր է, որն արձանագրվել է տարբեր մակարդակի թիմերի հետ կոնսուլտացիաների ընթացքում:

Արեգ Թադևոսյան

Ձեռներեցության կրթական մեթոդների հեղինակ

Մարգարիտայի թեյերը Հադրութի բույրով հասցրեցին բուրել մի քանի ամիս: 2020 թվականի օգոստոսին արդեն ուներ երեք կարևոր թեյերի փունջ՝ «Սիրուն», «Վնուշ» և «Հրաշք»: Դրանք տարբեր խառնուրդներ էին, անցել էին սանիտարական հետազոտություն, սերտիֆիկացվել էին:

Կառավարման հմտություններ չունենալը կարող է հանգեցնել բիզնեսի փակման: Եկամուտների, ծախսերի ու մուտքերի կանխատեսումը և դրանց կառավարումը բիզնեսի հիմնասյուներից են, եթե չեն արվում դրանք, բիզնեսի գործունեությունը մնում է բախտի քմահաճույքին:

Մարգարիտա Գրիգորյան

«Տող» բիզնեսի հիմնադիր



Սոցիալական աշխատողների ասոցիացիան եռամյա ծրագրի շրջանակներում առնվազն 306 խոցելի անհատ ստացել է փոքր դրամաշնորհ՝ սեփական բիզնես գաղափարները իրագործելու նպատակով: Եվ գրեթե բոլորը հաջողել են:

«Մեծ ուշադրություն է դարձվել մոտիվացիայի բարձրացմանը: Մարդկանց օգնել ենք հասկանալու, որ նպաստը չպետք է լինի եկամտի միակ աղբյուրը, և որ պետական աջակցությամբ ապրելու կենսակերպը կարող է հանգեցնել անձնական նվաստացման: Մարդկանց մոտ զարգացվել է սեփական ուժերին հավատալու և ինքնուրույն եկամուտ հայթայթելու ցանկություն»:

Միրա Անտոնյան

Սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ

Բիզնես ոլորտի առողջացման համար 2 հիմնական առաջարկություն կա.

- Աջակցել սահմանափակ թվով և ձեռնարկատիրական ջիղ ունեցողներին՝ պայմանով, որ նրանք աշխատատեղեր ստեղծեն մյուսների համար:
- Ուսումնասիրել հաջողված նախագծերը, սովորել ու ընդօրինակել դրանցից:

Արեգ Թադևոսյան

Ձեռներեցության կրթական մեթոդների հեղինակ